

անցեալ տարի փետրուարի քառասուն ատթեկան մեռաւ : Դեռ երիտասարդ հասակին մէջ՝ զՀէրակէրդ Սրբնաէր և զՎիէրաթրաս, որոնք չէին հաւասար կանանց ուսումնական ընդունակութեան՝ համոզեց թէ սիսալանաց մէջ էին . անսովոր շանիւք և եռանդեամբ մշակեց շափաբերական և բնական ուսմունքները . 1874ին արդէն պսակաւոր (laureate) էր 'ի համալսարանին կէթթինկէի . յետոյ փորֆ. Գրուկոլսիի հետ ամուսնանալով՝ քիչ մը ատեն ամուսնոյն և որբոցը հետ 'ի Մոսկուա կեցաւ, ուր գրեց «Ազատ Ռատուցանող» վէպն : Բայց յետոյ նիւթական և դրամական ձախորդութիւնք, ամուսնոյն անձնասպանութիւնը՝ ըստիպեցին զինքը որ ապրելու համար զնուրսը աշխատութիւն փնտէ : 1883ին Մոդիուլմի համալսարանէն հրաբրուեցաւ շափաբերական ուսմանց զասախօսութեան . անգ իսկոյն աշակերտաց համարումը շանեցաւ, այն ատեն սկսաւ իւր առանձնական ուսմանց ալ պարապիլ, մասնաւորապէս լուսոյ վարդապետութեան վրայ . յետոյ Երևակին մանեկին վրայ աշխատեցաւ . համառօտ գրբոյկ մը գրեց՝ զոր Փարիզու Գիտութեանց նեմարանը 1888ին վարձատրեց Պորտէնի ընծայով . ողբերգութիւններ ալ գրեց . ինչպէս «Երջանկութեան մարտր», «Յի շատակը մանկութեան» են :

ՇՆՈՐՉԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԲԱՋՄԱՎԻԳԻՍ յիսնամեայ շրջանին առթիւ՝ լրագրաց և ազգային պարբերական հրատարակութեանց, և ստուկականաց առանձինն նամական . առ մեզ ուղած բարեմարթութեանց և խրախուսանաց՝ հրապարակաւ կը յայտնէ Խմբագրութիւնն իւրին շնորհակալութիւնն : ինչպէս արգէն ումանք գուշակեցին՝ ազգային գրաւոր կենաց մէջ հանդիպած պյազիսի եղական և առաջին դէպք մը՝ պէտք էր մասնաւոր կերպով տօնել . և ինչպէս հեռաւորդը՝ ևս առաւել մերձաւորդ և հրասարակողք այս գեղեցիկ փափազն ունեն՝ պատրաստութիւնք ալ սկսած էին . սակայն խմբագրութենէն անկախ նիւթական պատճառ տարւոյս սիլիցը հարակող հիւանդութիւնն՝ որ այս տարի մասնաւոր կերպով ծանրացաւներ և քաղաքին և Միաբանութեան վրայ՝ խոշնուան և արգելք եղան այս փափազանաց գործազրութեան . որով խմբագրութիւնն ոչ միայն շկրցաւ արժանաւոր կերպով տօնել իւր յիսնամեակն , այլ և վերոյցբեալ ակամայ պատճառաց համար՝ սովորական պրակաց հրատարակութիւնն իսկ՝ անսովոր կերպով յետածգեցաւ . առ որ կը յուսանց թէ մեր յարգոյ ընթերցողք ներողամիտ կ'ըլլան :

Դարձեալ կրկին շնորհակալութիւննիս յայտնելով՝ պատի ունիմք ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ խմբագրութիւնն իւր յիսնամեակն պիտի տօնէ գալ տարի (1893) . այս առթիւ բնական է՝ թազմալիպին վրայ ինչ ինչ անհրաժշտ փափոխութիւններ և բարորդումներ պիտի կատարուին . այս փափոխութիւնները մասնաւոր շրջաբերականով պիտի ծանուցանեմք մեր յարգոյ թաժանորդաց ներկայ Ցունիս ամսայ մէջ :